



ԱՐՄԱՎԻՐԻ Ռ. ԵՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022Թ.

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ -Նախագծային մեթոդի կիրառումը

<<Պատմություն>> առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Արփենիկ Մարգարյան
անուն, ազգանուն

Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
ուսումնական հաստատության անունը

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան
անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ 2022

Բովանդակություն

1. Ներածություն.....3էջ
2. Գրականության ակնարկ.....5էջ
3. Գործնական համատեքստ6էջ
4. Ամփոփում.....18 էջ
5. Գրականության ցանկ20 էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցի և ուսուցչի առջև այսօր բազմաթիվ խնդիրներ են ծառայում: Անհրաժեշտ է փնտրել ուղիներ ցանկացած առարկայի ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ և հետաքրքիր դարձնելու համար: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ռազմավարություններ, որոնք կսովորեցնեն աշակերտներին նյութի յուրացման ընթացքում ինքնուրույն դիտարկումներ և եզրահանգումներ անելու, վերլուծելու, համադրելու, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, լուծումներ որոնելու և գտնելու, որոշումներ կայացնելու:

Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոխվել են պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ: Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասիվ ունկնդրողի դերը փոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ և ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառները, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Վերը նշված կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսուցման ժամանակակից նմանօրինակ տեխնոլոգիաներից է նախագծային ուսուցումը, որը որպես հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մի շարք մեթոդների և սովորողների որոշակի գործողությունների, հնարների համադրություն, իրականացվում է տրված առաջադրանք կատարելու նպատակով: Նշված տեխնոլոգիայի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերելու գիտելիքներ: Նախագծային տեխնոլոգիայի հիմքում ընկած են սովորողի ճանաչողական, համագործակցային, հետազոտական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, փաստերը համադրելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Այս դեպքում մանկավարժը ստանձնում է

մշակողի, համակարգողի, փորձագետի և խորհրդատուի դերը: Նախագծային ուսուցումը դասավանդողների ու սովորողների համատեղ կրթական գործունեությունն է, որը նպատակաուղղված է որևէ հիմնախնդրի տեսական կամ գործնական լուծմանը: Այն ակտիվ և հարցումների վրա հիմնված ուսուցում է, որը հակադրվում է ուսումնական նյութը սուկ անգիր անելու գործընթացին:

Ներկայումս դպրոցում առկա են բոլոր հնարավորությունները սովորողների գործունեության հասուկ տեսակի՝ նախագծային մտածողության զարգացման համար, այն է՝ նախագծային գործունեության օգնությամբ: Նախագծային մեթոդով աշխատելու առավելություններից մեկն էլ այն է, որ թե՛ սովորողը, թե՛ դասավանդողը նախագիծը սկսելուց առաջ որոնողական և ստեղծագործական աշխատանք են տանում: Արդյունքում ստացվում է հետաքրքիր, ուսուցողական, ստեղծագործ աշխատանք:

Նախագծի կազմակերպման և իրականացման ընթացքում կարևոր է հաշվի առնել սովորողի տարիքային առանձնահատկությունները, կարողությունները, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իր հմտությունները, հնարավորությունների սահմանը: Յուրաքանչյուր նախագծի ավարտին սովորողը, իր կատարած աշխատանքի արդյունքը տեսնելով, մեծ ոգևորություն է ապրում, կիրառում իր պատրաստած իրը կենցաղում և ձևավորելով իր անհատական ճաշակը, ցանկանում է տարբերվել շրջապատից և լինել առանձնահատուկ ու չկրկնվող¹:

Դպրոցում պատմություն առարկայի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող աշակերտների հետ ուսուցիչները շատ հաճախ տարբեր ուղղություններով աշխատանքներ են իրականացնում: Այդ ուղղություններից են առարկայական օլիմպիադաների անցկացումը և ինտելեկտուալ խաղերի կազմակերպումը: Մեկ այլ ուղղություն է աշակերտների հետազոտական և նախագծային գործունեության կազմակերպումը:

Կրթական բարեփոխումների գլխավոր արդյունքն այսօր պետք է լինի դպրոցն ավարտող երիտասարդի, ինչպես իր, այնպես էլ՝ հասարակության բարեկեցության համար անձնական պատասխանատվություն կրելու կարողությունն ու դրան պատրաստ լինելը: Այդպիսի արդյունքի հասնելու համար դպրոցի գործունեության մարտավարական ուղղությունը պետք է դառնա զարգացնող կրթությունը, որի

¹ Бурков В.Н., Как управлять проектами, Москва: Синтег, 1997, с.23.

ընթացքում ուսուցչի և հոգեբանի ուշադրության կենտրոնում աշակերտի մտածելն է և նրա ուսումնական գործունեությունը, այլ ոչ թե՝ ուսուցանելու մեթոդներն ու տեխնոլոգիաները:

Այս տեսանկյունից, հատկապես՝ նախագծային գործունեությունը, համապատասխանում է կրթության նոր խնդիրներին և կարող է դառնալ կրթության բովանդակության բարեփոխումների տարրերից մեկը և՛ դպրոցում, և՛ բուհում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՆԱՐԿ

Նախագծային մեթոդը խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ է, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով (պրոֆ. Եվ. Ս. Պոլատ): Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծային մեթոդը ուսուցման միջոց է, որը 18-րդ դարում ներդրվել է Եվրոպայում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ, հուշարձանի նախագծման խնդիրներ:

Դեռևս 20-րդ դարի առաջին կեսին Ջոն Դյուիի կողմից պրագմատիկ մանկավարժության հիման վրա մշակված նախագծերի մեթոդը հատկապես կարևորվում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում:

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկյան ուսուցիչ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակումը, որտեղ նա այդ հայեցակարգը սահմանեց որպես «սրտից կատարված ծրագիր»²: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել Համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում, ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Նախագծային ուսուցման կենտրոնական հասկացությունը նախագիծն է, սովորողի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծման մտահղացումը:

Բառարաններում նախագիծ բառը բացատրվում է որպես ինչ-որ փաստաթղթի կամ մտահղացման նախնական բովանդակություն, ծրագիր: Այլ կերպ ասած՝ նախագծային մեթոդն ուսումնական գործունեության ձև է, երբ սովորողներն անմիջականորեն ներառված են ակտիվ իմացական գործընթացում, ինքնուրույն

² Дьюи, Дж., Введение в философию воспитания, М.: Госиздат, 1921, с. 19.

ձևակերպում են ուսումնական խնդիրը, անհրաժեշտ տեղեկություններ հավաքում, մշակում խնդրի լուծման տարբերակները, վերլուծում աշխատանքի արդյունքները, կատարում եզրահանգումներ՝ ուսումնական կենսափորձ ձեռք բերելով:

Նախագծային մշակույթի առանձնահատկությունը նյութական և հոգևոր ոլորտներում ինչ-որ նոր բան ստեղծելու ձգտումն է:

Նախագծային ստեղծագործական մտածողությունը գիտական մտածողություն է նոր մտքերի ու գաղափարների ծագման փուլում, հետագա փուլերում ներգրավվում է քննադատական մտածողությունը ևս: Կրթությունը կոչված է ձևավորելու և զարգացնելու սովորողների նախագծային ստեղծագործական մտածողությունը: Լավագույն, սեփական լուծումը գտնելու ձգտումն ուսուցման հիմնական շարժառիթն է նախագծային կրթությունում³:

Ներկա ժամանակներում միջին և ավագ դպրոցի խնդիրն է ոչ միայն սովորողների կրթության բարձր մակարդակի ապահովումը, այլև՝ նրանց մտածողության բազմակողմանի զարգացումը, իրենց գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և ժամանակակից գիտական տեղեկատվության «օվկիանոսում» կողմնորոշվելու ունակությունը: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ձեռք բերում հատկապես հումանիտար շարքի առարկաների համար, քանի որ այդ առարկաներն ևս զարգացնում են սովորողի գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ունակություններն ու կարողությունները:

Նախագծային մեթոդի կիրառումը նպաստում է ծրագրային նյութի ընկալմանը, թույլ է տալիս բնականոն կերպով զարգացնել անհրաժեշտ ուսումնական ունակություններ, ձևավորել հաղորդակցային կարողություններ: Հատուկ պետք է նշել այս մեթոդի արդյունավետությունը սովորողների պատասխանատվության, ինքնուրույնության, խմբի հետ աշխատելու ունակության զարգացման գործում:

Գոյություն ունեցող մանկավարժական պրակտիկան հիմք է տալիս նախագծերը դասակարգելու հետևյալ կերպ .

- ըստ *նախագծի մշակմանը մասնակցող աշակերտների թվի՝* տարբերում են անհատական կամ խմբային նախագծեր.

³ Нартова О.В., Инновационные технологии в образовании: проектная методика / Качество образования: системы, технологии, инновации: материалы международной научно-практической конференции. – Барнаул: Изд-во АлГТУ, 2007, С. 316-317.

- ըստ *բովանդակության*՝ միառարկային կամ միջառարկային.
- ըստ *նախագծային գործունեության շարունակականության*՝ նախագծերը կարող են լինել կարճաժամկետ (1-2 պարապմունք), միջնաժամկետ (1 ամիս) և երկարաժամկետ (1 ամսից մինչև 1 տարի).

- *գերիշխող գործունեությունից* կախված՝ տարբերում են տեղեկատվական, հետազոտական, գործնական ուղղվածությամբ, հեռահաղորդակցման նախագծեր:

Տարբերում են նախագծերի իրականացման հետևյալ փուլերը.

Նախապատրաստում.

Աշխատանքի բովանդակությունը. նախագծի թեմայի և նպատակի որոշումը, հիմնախնդրի ներկայացումը:

Սովորողների գործունեությունը. քննարկում են թեման ուսուցչի հետ և անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ ստանում, ապա՝ նպատակներ դնում:

Ուսուցչի գործունեությունը. ծանոթացնում է սովորողներին նախագծային մեթոդի իմաստին ու պատճառաբանում այդ մեթոդը, ինչն օգնում է նպատակադրմանը: Աշակերտներին տրվում է հանձնարարություն. լուծե՛ք խնդիրը՝ հիմքում դնելով համամոլորակային հիմնախնդիր. ի՞նչ կպատահի, եթե Երկրի երեսից վերանա երկաթը: Ի՞նչ գործոններ են երկաթը դարձրել այդքան կարևոր և փաստորեն, անփոխարինելի: Այդ հարցի պատասխանի փնտրտուքն էլ կանխորոշեց նախագծի հետագա աշխատանքները: Առաջ քաշվեցին այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում էր ն՝ տեսական հիմնավորումներ, և՛ փորձնական հաստատումներ:

Պլանավորում.

Աշխատանքի բովանդակությունը. տեղեկությունների աղբյուրների որոշումը, արդյունքների ներկայացման եղանակները (*հաշվետվության ձևերը*), արդյունքների և գործընթացի գնահատման չափանիշների հաստատումը, թիմի անդամների միջև խնդիրների (*պարտականությունների*) բաշխումը:

Սովորողների գործունեությունը. գործողության ծրագիր են մշակում ու խնդիրներ ձևակերպում:

Ուսուցչի գործունեությունը. մտքեր է առաջարկում ու ենթադրություններ հայտնում:

Պլանավորման փուլում ուսուցիչը կատարում է *նախապատրաստական*

աշխատանք. աշակերտների գիտելիքների հիման վրա առաջնային գաղափարների առաջադրում, աշակերտների հակումների, հետաքրքրությունների և հնարավորությունների բացահայտում, նախագծերի թեմաների առաջադրում, վարկածների ու նպատակների ձևակերպում, պլանի մշակում, աշխատող խմբերի ձևավորում, նախագծի ղեկավարի ընտրություն:

Կարևոր պահ է *ռեսուրսային ապահովվածությունը*՝ համակարգչային սարքավորումների, աուդիո, վիդեո, պատճենահանման տեխնիկայի տրամադրումը, գրադարանային սպասարկումը:

Մասնակիցների պարտավորությունների բաշխումը կատարում են իրե՛նք՝ աշակերտները, բաց քննարկմամբ: Ուսուցիչը նույնպես հայտնում է իր կարծիքը՝ *հավասարը հավասարի հետ* սկզբունքով քննարկմանը մասնակցելով: Յուրաքանչյուր աշակերտի պարտականությունները որոշելիս պետք է հաշվի առնել նրա անձը, անհատական հակումները, հետաքրքրությունները և այլ հատկություններ: Խիստ կարևոր է հենց սկզբից հստակ սահմանել նախագծի յուրաքանչյուր մասնակցի խնդիրն ու կատարելու ժամկետը: Մենք կազմել էինք *մոտավոր ժամանակացույց*, որում նշվել էին յուրաքանչյուր փուլի ավարտի ժամկետը և սպասվող արդյունքները:

Հետազոտություն.

Աշխատանքի բովանդակությունը. տեղեկությունների հավաքում, միջանկյալ խնդիրների լուծում, հետազոտության մեթոդին տիրապետում: Հիմնական միջոցները՝ *հարցում, դիտում, փորձ*:

Սովորողների գործունեությունը. կատարում են հետազոտություն՝ միջանկյալ խնդիրներ լուծելով:

Ուսուցչի գործունեությունը. հետևում է, խորհրդակցում, անուղղակի ղեկավարում գործընթացը:

Վերլուծական փուլի ընթացքում աշակերտներն իրականացնում են տեղեկատվության որոնում ու հավաքագրում՝ գրականության աղբյուրները, զանգվածային լրատվական միջոցները, ինտերնետն օգտագործելով: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների, ինչպիսիք են դիտարկումը, անկետավորումը, սոցիոլոգիական հարցումը, փորձի իրականացումը: Գրականության հետ աշխատելու համար առաջին փուլում ուսուցիչը սովորեցնում է *սեղմագրման* սկզբունքները: Աշակերտները յուրացնում են

տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և սինթեզելու ընդունակությունը:

Կարելի է նաև խումբը բաժանել չորս ենթախմբի: Այդ ենթախմբերից առաջինը զբաղվում է գրականության վերաբերյալ *ակնարկի* պատրաստմամբ, երկրորդը՝ նախապատրաստվում և կատարում փորձնական մասը, երրորդը՝ զբաղվում նախագծի *համակարգչային ներկայացմամբ*, իսկ չորրորդը՝ *դպրոցական համաժողովում* զեկուցում կատարված աշխատանքի մասին:

Արդյունքները և քննարկումը.

Աշխատանքի բովանդակությունը. տեղեկությունների վերլուծություն, եզրակացությունների ձևակերպում:

Սովորողների գործունեությունը. վերլուծում են հավաքած տեղեկությունները:

Ուսուցչի գործունեությունը. դիտում է, խորհուրդ տալիս:

Ստացված տեղեկատվության մշակումն աշակերտներից պահանջվում է խոր ըմբռնում և իմաստավորում, փաստերի վերլուծություն և եզրակացություն անելու հմտություն, ստացված տվյալների համակարգում: Ընդ որում՝ մշակվում են փորձերի, սոցիոլոգիական հարցումների և անկետավորման արդյունքները:

Արդյունքների ներկայացումը (հաշվետվությունը).

Այս փուլում աշակերտներին նախագծի ներկայացման ձևի ընտրության մեջ առավելագույն ինքնուրույնություն է ընձեռվում:

Կատարվում է արդյունքների ներկայացում տարբեր ձևերով՝ բանավոր հաշվետվություն, բանավոր հաշվետվություն՝ նյութի ցուցադրմամբ, գրավոր հաշվետվություն:

Սովորողները հաշվետվություն են տալիս, քննարկում հաշվետվությունները: Ուսուցիչը լսում է և նպատակային հարցեր առաջարկում կամ ելույթ ունենում՝ որպես սովորական մասնակից:

Նախագծային գործունեության վերջնական արդյունքը ներկայացվում է զեկուցման, համակարգչային ներկայացման, ստենդային հոդվածի ձևով:

Արդյունքների և գործընթացի գնահատում.

Սովորողների գործունեությունը. կոլեկտիվով քննարկում են գնահատականները, տալիս գործունեության ինքնագնահատում:

Ուսուցչի գործունեությունը. գնահատում է սովորողների ջանքերը, նրանց

կրեատիվությունը, տեղեկությունների աղբյուրների օգտագործման որակը, աշխատանքի շարունակականության հնարավոր լինելը, հաշվետվության որակը:

Արդյունքների ներկայացման փուլը ներառում է հետևյալ տարրերը

| Չափորոշիչներ | Միավորներ | Աշխատանքների արդյունքներ |
|---|------------------------|---|
| Կողմնորոշում տեղեկատվության աղբյուրներում | 3 2 0 | Հավաքված է ամբողջ տեղեկատվություն Հավաքված է քիչ տեղեկատվություն Տեղեկատվությունը թեմային չի առնչվում |
| Հատուկ հասկացությունների կիրառումն ու ճիշտ օգտագործումը | 3 2 1 | Թեմայում լավ է կողմնորոշվում Միջին մակարդակ Ցածր մակարդակ |
| Դրված խնդրի լուծման ոչ ստանդարտ մոտեցումներ | 10 0 | Առկա են Բացակայում են |
| Աշխատանքի կատարման տեխնոլոգիականությունը | 1 -1 1 1 2 | Աշխատանքի ժամկետները պահպանված են Աշխատանքի ժամկետները պահպանված չեն Կատարված է աշխատանքի վերլուծությունը Ներկայացված են նկարներ, ցուցապաստառներ Օգտագործված են տեխնիկական միջոցներ |
| Աշխատանքի հաշվետվության | 1 | Պահանջներին համապատասխանում է (վերնագիր, ներածություն, գլխավոր մաս, |

| | | |
|---|---|---|
| ձևակերպումը | 0 | վերջաբան, գրականության ցանկ) Պահանջներին չի համապատասխանում |
| Մուլտիմեդիաներկայացում | 1 -1 1 | Աշխատանքի ձևակերպումը նպաստում է ըմբռնմանը Աշխատանքի ձևակերպումը շեղում է բուն բովանդակությունից Օգտագործված են տեխնիկական միջոցներ (թվային տեսախցիկ, թվային մանրադիտակ, սքաներ) |
| Նախագծի պաշտպանությունը (բանավոր ելույթը) | 1 2 1 -1 1 1 -1 -2 | Զեկուցումը կարդացվում է սեղմագրով Զեկուցումը կարդացվում է առանց սեղմագրի օգտագործման Կիրթ խոսքի տիրապետում Ոչ կիրթ զեկուցման շարադրանք Հարցերին հեշտ պատասխանելու կարողություն, պատասխանների ճշգրտություն Ինքնատիրապետում, վստահություն, նյութի շարադրման հստակություն Նախագիծը պաշտպանելիս ոչ ճշգրիտ վարքագիծ Ժամանակաչափի չպահպանում |

Նախագծային աշխատանքը թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի գիտելիքներն ու կարողությունները գնահատել *համալիր* կերպով: Նախագծային աշխատանքի ստեղծագործական հաշվետվությունը կարելի է համարել ամփոփիչ ատեստացիա (*քննություն*): Այդ դեպքում ուսուցիչը յուրաքանչյուր աշխատանքի համար գրախոսություն պետք է պատրաստի: Շնորհանդեսից հետո խիստ կարևոր է աշակերտների հետ քննարկել արդյունքները, նշել դրականը, քննարկել թերություններն

ու նշել նախագծային աշխատանքների բարելավելու կապակցությամբ աշակերտների առաջարկները (*ռեֆլեքսիայի* սկզբունք)⁴:

Նախագծային մեթոդով դասերի օրինակներ.

Վանի թագավորության հզորացումը: Արգիշտի Ա

թեմայի շրջանակում կիրառեցինք նախագծային մեթոդը: Դասարանը բաժանեցինք խմբերի: Նախագծերի իրականացման ժամանակ բաշխեցինք պարտականությունները աշակերտների միջև և սահմանեցինք յուրաքանչյուրի պատասխանատվությունը՝ ընդհանուր առմամբ նախագիծը կատարելու համար:

Սովորողների կողմից կատարվեց նախագծի թեմայի ընտրություն, դրա հիմնավորում, աշխատանքային պլանի կազմում, որը հաստատվեց մեր կողմից: Այնուհետև ընտրվեց համապատասխան գրականություն, և կատարվեց անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրներից օգտվելու հիմնավորում և առանձնացում: Կատարվեց նաև պարտականությունների բաշխում, և հաստատվեց հետազոտական աշխատանքի կատարման փուլերի ժամանակացույցը:

Սովորողը, պահպանելով ըստ փուլերի նախագծի կատարման ժամանակացույցը, հաշվի առնելով հետազոտության պահանջները, կատարում է ուսուցչի կողմից տրված նախնական և ընթացիկ գործողություններն ու հանձնարարությունները: Իրականացվում են եզրափակիչ աշխատանքները. հետազոտության վերջնարդյունքների ամփոփում, կազմում, ներկայացում, քննարկում, անհրաժեշտության դեպքում նաև աշակերտն իր հետազոտությունը նախապատրաստում է հրատարակության:

Աշակերտներին հանձնարարեցինք կազմել նախագծային հետազոտական աշխատանք՝ Արգիշտի Ա_ի կողմից հիմնադրված Արգիշտիխինիլի քաղաքի հնավայրը ինչպես դարձնել զբոսաշրջության կենտրոն, զարգացնել տուրիզմը՝ նախապես ստեղծելով քաղաքակիրթ պայմաններ: Նախագծի սկզբնական մասում՝ բացատրագրում, աշակերտները ներկայացրին արտադրական նախագծի կարևորության կամ հրատապության մասին հիմնավորում՝ անդրադառնալով այն խնդրին ,որ Նոր Արմավիր համայնքում գտնվող Արգիշտիխինիլի քաղաքի հնավայրը մոռացության է մատնված, շատերը ոչինչ չգիտեն նրա մասին ,իսկ նրա մոտակայքում

⁴ Лазарев В.С., Новое понимание метода проектов в образовании // Проблемы современного образования, 2011, №6, С. 35-43.

գտնվող Սուրբ Դավթի մատուռը ուխտատեղի է :Ուխտավորներին տեղեկացնելու համար Արգիշտիխինիլի քաղաքի մասին ,կարելի է տեղանքում տեղադրել համապատասխան պաստառներ:Կարևորվեց նաև այն հանգամանքը,որ ուրարտական շրջանի նմանատիպ մեծ արժեք ունեցող հնավայրը չի կարելի անտեսել,այն մեր պատմության այդ վիճելի շրջանի լավագույն վկայություններից է:Նախագծի նպատակն է ներկայացնել Արգիշտիխինիլի քաղաքի հնավայրը որպես աշխարհագրական միջավայր,որպես պատմամշակութային զարգացման կենտրոն:Վերջնարդյունքում աշակերտները կկարողանան արժևորել այն որպես պատմամշակութային կենտրոն,որպես քաղաքակրթության վերելքի կենտրոն:

Աշակերտներին հանձնարարվեց հիմնավորել ընտրված թեմայի արդիականությունը. անհրաժեշտ է տալ հետևյալ հարցերի պատասխանները՝ ինչո՞ւ է ընտրված այդ թեման, ինչո՞վ է այն հետաքրքիր, ո՞րն է նրա նշանակությունը: Տվյալ գլխում պետք է հատուկ ուշադրություն դարձնել կատարվող աշխատանքի գործնական նշանակությանը:

Աշակերտները ներկայացրին սխեմա, որն ընդգրկում էր նախագծի կատարման համար անհրաժեշտ հիմնական բովանդակությունը: Սովորողը նախքան հետազոտություն սկսելը կարող է չպատկերացնել, թե հատկապես ինչ աշխատանք պետք է կատարի, բայց պահանջվում է, որ նախապես հստակ իմանա, թե ինչ հաջորդականությամբ պետք է իրականացնի: Շատ կարևոր է անդրադառնալ նախագծի (ընտրված թեմայի) վերաբերյալ պատմական տեղեկություններին, ցույց տալ պատմության և արդիականության կապը: Ըստ նախապես հաստատված հետազոտության պլանի՝ աշակերտների առաջին խմբին հանձնարարվեց մշակել տեսական նյութը,կազմել պաստառներ Արգիշտիխինիլի բնակավայրի մասին,որը համապատասխամ միջոցներ լինելու դեպքում ,կարելի էր տպագրել և տեղադրել հնավայրի տարածքում:Աշակերտների մյուս խմբին հանձնարարվեց աշխատել համապատասխամ կառույցների հետ(համայնքապետարան)՝ֆինանսական միջոցներ հայթայթելու համար: Մյուս խմբին հանձնարարված էր կազմել գեղեցիկ սահիկաշար և տեղադրել համացանցում: Նախագիծն ամփոփեցին և ներկայացրին եզրակացություն՝ ելնելով աշխատանքի կատարման բնույթից, հիմնավորելով ամենազլխավոր վերջնարդյունքները:

Հաջորդ դասի՝ <<Արտաշեսյան արքայատոհմը >> թեմայի ուսուցումն

իրականացնելով նախագծային մեթոդով՝ աշակերտներին հանձնարարեցինք կատարել ինքնուրույն հետազոտական աշխատանք և կազմել պատմական թեմատիկ զբոսայգու նախագիծ: Այն շատ հետաքրքիր մեթոդ է տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունները և կերպարներին ներկայացնելու համար: Համացանցից և հանձնարարված գրականությունից օգտվելով՝ աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացրեց պատմական զբոսայգու իր նախագիծը (աշակերտները կարող են աշխատել նաև խմբերով): Հետազոտության կատարման ընթացքում աշակերտները պահպանել էին ստեղծագործական հետազոտության հետևյալ տրամաբանական հաջորդական սխեման.

- 1) Ընտրված թեմայի այժմեականության հիմնավորում,
- 2) Հետազոտության նպատակի և խնդիրների բացահայտում,
- 3) Հետազոտության օբյեկտի և առարկայի հիմնավորում,
- 4) Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն,
- 5) Հետազոտության գործընթացի նկարագրություն,
- 6) Հետազոտության արդյունքների վերլուծություն,
- 7) Ստացված արդյունքների գնահատում և հետևությունների ձևակերպում:

Աշակերտները նախօրոք առանձնացրել էին թեմատիկ զբոսայգու բաղադրիչներ՝ ջրային գոտի (պատկերել այդ շրջանի նավերի տեսքը), ռեստորան (ի՞նչ սնունդ են օգտագործել այդ շրջանում հայերը), խանութ (ի՞նչ է վաճառվել շուկաներում), դերասաններ (պատմական ի՞նչ կերպարներ կարող են լինել զբոսայգում՝ թագավորներ, ռազմական գործիչներ, այլ ազգերի ներկայացուցիչներ), ցուցասրահներ (ներկայացնել մշակույթը), սարսափի սրահ (այս սրահում կարելի է ներկայացնել Արտաշեսյանների շրջանի կարևոր ճակատամարտերը): Քանի որ թեման շատ ծավալուն է կարելի է հանձնարարել աշխատել խմբերով և խմբի յուրաքանչյուր անդամին հանձնարարել անդրադառնալ մեկ բաղադրիչի: Աշխատանքը ներկայացնել զեկույցների, պատմաբանների և սահիկաշարի տեսքով: Աշխատանքն ավարտեցին կից ներկայացված գրականության ցանկով: Նախագծի վրա աշխատելիս օգտագործել էին ստեղծկատվության տարբեր աղբյուրներ: Այդ իսկ պատճառով նախապես

սովորողներին ծանոթացրել էինք հեղինակային իրավունքին և տեղեկատվության տարբեր աղբյուրներից նյութերի կամ փաստերի օգտագործման պայմաններին, այդ թվում համացանցից օգտվելու հնարավորություններին:

Հաջորդ դասի՝ « ՀՀ_ը արդի շրջանում » ամրապնդման ժամանակ աշակերտներին հանձնարարեցինք գրել և ներկայացնել նախագծային համառոտ աշխատանք և ՀՀ _ն խնդիրները և այդ խնդիրների լուծման մեր մոտեցումները(12_րդ դասարան):

Դասարանը նախապես բաժանեցինք երեք խմբի՝ յուրաքանչյուր խմբի տրվում է դասի նախագիծը և ուսումնասիրման ենթակա նյութը:

| | Նախագիծ 1 | Սովորողի աշխատանքը |
|--|--|---|
| | <p>Նպատակը՝ Ուսումնասիրել ՀՀ խնդիրները կրթության և առողջապահության ոլորտներում :</p> <p>Ներկայացնել՝</p> <p>1.Այդ խնդիրների լուծման մեր տարբերակները և ուղիները:</p> | <p>Նախագիծը ներկայացնել սլայդի տեսքով</p> <p>Աշխատանք ինքնուրույն, այնուհետև՝ խմբի հետ:</p> |

| | Նախագիծ 2 | Սովորողի աշխատանքը |
|--|-----------|--------------------|
|--|-----------|--------------------|

| | | |
|--|--|---|
| | <p>Նպատակը՝ Ուսումնասիրել ՀՀ խնդիրները արտաքին քաղաքականության ոլորտում: Ներկայացնել՝</p> <p>1. Խնդրի լուծման մեր տարբերակները և մոտեցումները:</p> | <p>Նախագիծը ներկայացնել գծապատկերի միջոցով:</p> |
|--|--|---|

| | Նախագիծ 3 | Սովորողի աշխատանքը |
|--|--|---|
| | <p>Նպատակը՝ Նկարագրել ՀՀ բնապահպանական և էկոլոգիական խնդիրները, ուսումնասիրել դրանք սեփական համայնքի համատեքստում: Ներկայացնել՝</p> <p>1. Վերը նշված խնդրի լուծման սեփական մոտեցումները:</p> | <p>Նախագիծը ներկայացնել սլայդի տեսքով</p> |

Այսպիսով՝ նախագծային մեթոդը ,որը նվրուպական առաջավոր դպրոցներում համարվում է ամենահաճախակի կիրառվող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներից մեկը,մենք փորձեցինք կիրառել պատմության դասավանդման արդյունավետությունը բարձացնելու նպատակով և արձանագրեցինք բավականին լավ արդյունքներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուսուցման այս եղանակի կիրառումը 3 դասերին մեզ հնարավորություն տվեց արդյունավետ դարձնել պատմության ուսուցման գործընթացը: Աշակերտները ձեռք բերեցին ինքնուրույնաբար սովորելու և ստեղծագործելու, դրսևորել հետազոտություն կատարելու հմտություններ, ծանոթացան գիտահետազոտական աշխատանքների կատարման ձևաչափերին, որոնք նրանց անհրաժեշտ են բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալիս: Այն հնարավորություն ընձեռեց զարգացնելու սովորողի ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողությունները, կապ ստեղծել ձեռք բերված գիտելիքների, կարողությունների և դրանց կիրառման միջև: Այն նպաստեց համագործակցային պատասխանատվության, առաջացած խնդիրների լուծման և սեփական դիտարկումներն իրականացնելու կարողությունների զարգացմանը: Սակայն նախագծային մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է հիշել, որ այս մեթոդը *պատմության* դասընթացի ողջ ծավալը չի կարող ներառել ու երկար ժամանակ է պահանջում, շատ աշխատատար է: Ըստ մեր փորձի՝ նախագծային ուսուցումն առավելագույնս արդյունավետ է որպես արդիական ուսուցման մեթոդների խիստ կարևոր լրացում:

Ազատ դաստիարակության գաղափարից ծնվելով՝ ներկայումս նախագծային մեթոդը վերածվում է ինտեգրացված բաղադրամասը լրիվ մշակված և արդեն որոշակի կառուցվածքով կրթության համակարգի: Բայց էությունը նույնն է մնում. *խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է որոշակի համալիր գիտելիքների տիրապետում, կանխատեսել այդ խնդիրների լուծումը նախագծային գործունեությամբ, զարգացնել ստացած գիտելիքների գործնական կիրառման ունակություն, քննադատական և ռեֆլեկտոր մտածողություն:*

Թիմային և խմբային նախագծի ընդհանուր գնահատականը ձևավորվում է կատարողներից յուրաքանչյուրի գնահատականի ամփոփման և միջինացման հիման վրա: Անհատական նախագծերը ընտրում են աշակերտները և հետազոտությունները կատարում կա՛մ ինքնուրույնաբար, կա՛մ ուսուցչի հետ համատեղ: Բարձր դասարանների սովորողները տարեկան իրականացնում են ոչ պակաս քան երկու նախագիծ՝ յուրաքանչյուր կիսամյակում մեկական: Այս մեթոդը դիտարկվում է որպես

աշակերտակենտրոն ուսուցման մի տարբերակ, որն էապես բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը և աշակերտների մոտիվացվածությունը: ՆՄՀ-ը կարելի է կատարել գրեթե բոլոր առարկաների գծով, հատկապես նախամասնագիտական: Պատմության դասավանդման մեջ որպես նոր ազդավարություն ընտրված նախագծային մեթոդը, օգնում է աշակերտների մոտ ձևավորել պատմական մտածողություն, այն հնարավորություն է տալիս պատմության ընկալման շրջանակն էապես ընդլայնելու և սովորողներին մղում է առավել խորքային դիտարկումների: Այն պատմության դասավանդումը դարձնում է ավելի բովանդակային և մոտիվացնող: Ուսուցման այս մեթոդը մեզ կօգնի ,որպեսզի պատմությունը պարզապես չդառնա թվականների և անունների շարան, այն կօգնի ,որ սովորողները քննեն պատմությունը, ըմբռնեն պատմական կարևոր հասկացությունները և դասեր քաղեն պատմությունից:

1. Ռաֆայելյան Ն. Միլիտոսյան Լ. Նախագծի մեթոդը՝ որպես միջառարկայական ինտեգրման միջոց: Տիգրան Մեծ, Երևան 2005.
2. Бурков, В.Н. Как управлять проектами, Москва: Синтег, 1997.
3. Дьюи, Дж. Введение в философию воспитания, М.: Госиздат, 1921.
4. Лазарев В.С., Новое понимание метода проектов в образовании // Проблемы современного образования, 2011, №6.
5. Нартова О.В., Инновационные технологии в образовании: проектная методика / Качество образования: системы, технологии, инновации: материалы международной научно-практической конференции. – Барнаул: Изд-во АлгГТУ, 2007.